ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Շիրակի մարզում 2021 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ

Բուսաբուծություն.

2022թ. բերքի տակ կատարվել է 12425 հա աշնանացան ցորենի ցանք, որը նախորդ տարվանից պակաս է 2520 հա-ով:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը մարզի տնտեսություններում՝ 2020-2021թթ..

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ նվազում /+/-/ /հա/
		2020թ.	2021թ.	
1	Հացահատիկ և հատիկաընդեղեն	33288	36285	**+2997**
	որից՝ աշնանացան ցորեն	14791	14945	**+154**
	գարնանացան գարի	14413	14941	**+528**
2	Կարտոֆիլ	3465	3336	**-129**
3	Բանջարեղեն	1436	1283	**-153**
4	Տեխնիկական մշակաբույսեր	95	78	**-17**
5	Կերային մշակաբույսեր	10615	10764	**+149**
Ընդամենը		**48737**	**51580**	**+2843**

2021թ. գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունը համեմատած 2020թ. հետ ունեցել է 2843 հա-ի աճ:

Բերքահավաքի ամփոփ տվյալների համեմատականը 2020-2021թթ. ունի հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Միջին բերք /g/		Համախառն բերք /տ/	
		2020թ.	2021թ.	2020թ.	2021թ.
1.	Հացահատիկ և հատիկաընդեղեն	19.7	8.9	63200	25700
2.	Կարտոֆիլ	216.5	170.6	76500	58500
3.	Բանջարեղեն	174	131.3	25000	17360
4.	Պտղատու այգիներ և հատապտղանոցներ	64.7	36	4050	2120

Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի միջին և համախառն բերքերի նվազումը համեմատած նախորդ տարվա հետ պայմանավորված է 2021թ. ընթացքում եղանակային անբարենպաստ պայմաններից՝ ջերմային բարձր ֆոն, տեղումների բացակայություն:

Ոռոգման ջրի սակավության պատճառով խնդիրներ առաջացան Այգաբաց, Բենիամին և Ազատան բնակավայրերի կարտոֆիլի որոշակի ցանքատարածությունները ոռոգելու համար:

2021 թվականի ընթացքում մարզի 24 բնակավայրերում կարկտահարության հետևանքով վնասվել է շուրջ 2618 հա գյուղատնտեսական նշանակության հողտարածքներ:

2021թ. ընթացքում մարզում տեղադրվել է 46 հակակարկտային կայանք՝ Անի – 24, Աշոցք – 10, Սարապատ – 8, Գեղանիստ – 3 և Սպանդարյան – 1: Այժմ մարզում գործում է 196 հակակարկտային կայանք:

ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն աջակցություն ագրոբիզնեսի ծրագրի շրջանակներում մարզի 21 տնտեսությունների հաստատված հայտերի հիման վրա իրականացվել է 220 հազ. եվրոյի հատիկաընդեղենի, ոչխարաբուծության, խոտաբույսերի և այլ գյուղատնտեսական աջակցություն ծրագրեր:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից 2021թ. իրականացվել է գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության 15 ծրագիր: Մարզի գյուղատնտեսությամբ զբաղվողները առավել ակտիվ օգտվել են գարնանացան և աշնանացան հացահատիկային, կերային մշակաբույսերի սերմացուների ձեռքբերման և վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերից:

Ծրագրերից օգտված շահառուների թվի, ստեղծված աշխատատեղերի թվի, ներդրումների ծավալի և այլ տեղեկատվություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից դեռևս ՀՀ Շիրակի մարզպետարան չի ներկայացվել:

Անասնաբուծություն.

2021թ. դրությամբ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» 2-րդ ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

Աշոցք համայնքի Ղազանչի, Ձույգաղբյուր, Հարթաշեն և Մեծ Սեպասար բնակավայրերի 7500 հա արոտավայրերում կառուցվել են 25,6 կմ ընդհանուր երկարությամբ ջրարբիացման համակարգ տեղադրվել է 10 խմոց, կառուցվել է 4 փարախ, 4 հովվի կացարան, ծախսվել է 320 մլն ՀՀ դրամ, որից համայնքի համաֆինանսավորումը կազմել է 25 մլն ՀՀ դրամ:

«Ղազանչի համայնքի արոտօգտագործողների միավորում» ՍԿ-ին 20 % համաֆինանսավորմամբ տրամադրվել է՝ սրսկիչ, գութան և պարարտանյութ ցրող սարք, ընդհանուր արժեքը 3,6 մլն ՀՀ դրամ: «Արթիկ համայնքի արոտօգտագործողների միավորում» ՍԿ-ին 20 % համաֆինանսավորմամբ տրամադրվել է՝ պարարտանյութ ցրող սարք, ընդհանուր արժեքը 2 մլն ՀՀ դրամ:

2021 թվականի հունիս ամսվա ընթացքում մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրում բռնկված Սիբիրախտ հիվանդության հետևանքով տուժել են 10 գյուղացիական տնտեսություններ: Սիբիրախտ հիվանդությունից անկել են 10 գլուխ խոշոր եղջերավոր և 26 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Հիվանդության հետագա

ընթացքը կանխելու նպատակով սահմանափակվել է կենդանիների և կենդանական ծագման մթերքի տեղաշարժը բնակավայրից, իսկ առկա անասնագլխաքանակը ենթարկվել է պատվաստման՝ 1059 գլուխ խոշոր եղջերավոր և 644 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ:

Գյուղատնտեսական կենդանիների հաշվառման արդյունքները ամփոփ տեսքով բերվում է ստորև ներկայացվող աղյուսակում /2020-2021թթ./.

	2020թ.	**2021թ.**	**Աճ/նվազում (+/-)**
Խ.ե.կ. /հազ. գլուխ/	87095	90879	**+3784**
Որից՝ կովեր /հազ. գլուխ/	40986	42761	**+1775**
Խոզեր /հազ. գլուխ/	23676	18904	**-4772**
Ոչխարներ և այծեր /հազ. գլուխ/	66428	74986	**+8558**

ՀՀ Շիրակի մարզում անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության 2020-2021թթ. ցուցանիշները.

Անասնաբուծական մթերք	**Համախառն արտադրանք**		**Աճ/նվազում**
	2020թ.	**2021թ./սպասվող/**	**+/-**
Միս /հազ. տ/	24.7	25.5	**+0.8**
Կաթ /հազ. տ/	100.2	103	**+2.8**
Ձու /մլն հատ/	42.8	40.1	**-2.7**

ՀՀ ԷՆ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համայնքը սպասարկող անասնաբույժների միջոցով «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» Ծրագրի շրջանակներում մարզում իրականացվում է հակաանասնահամաճարակային ախտորոշիչ /բրուցելյոզ, լեյկոզ և տուբերկուլյոզ/ և կանխարգելիչ /սիբիրախտ, էմկար, դաբաղ, հանգուցային մաշկաբորբ/ միջոցառումներ:

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2021 թվականի աշնանը կատարված մոնիթորինգի արդյունքում մարզի թվով 15 համայնքների 5309 հեկտարի վրա իրականացվել են մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ: Համայնքներին անհատույց հատկացվել է 424,72 լ «Բրոմադիալոն» տեսակի մկնասպան թունանյութ:

ՀՀ Շիրակի մարզում առկա է թվով 3 սպանդանոց՝ «Բանդիվան կաթ» ՍՊԸ, «Արփի լենդ» և «Ֆրանս» ՍՊԸ, իսկ Աշոցք, Հայկաձոր և Արեգնադեմ բնակավայրերում ընթանում են նոր սպանդանոցների կառուցապատման աշխատանքները:

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՇԻԱԿԻ ՄԱՐԶԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականին որոշակի աշխատանքներ են իրականացվել Շիրակի մարզի շրջակա միջավայրի և նրա առանձին տարրերի բարելավման ուղղությամբ, որի նպատակով մարզում իրականացվել և ընթացքի մեջ են էկոլոգիական իրավիճակի բարելավման մի քանի ծրագրեր:

Ընթացքի մեջ է ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի հարմարվողականության հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Արթիկ քաղաքի փակված քարհանքերի տարածքում անտառաշերտերի ստեղծման և հեղեղատարների մաքրման» պիլոտային ծրագիրը, որի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 300 հա վարելահողերի սնուցման, 15 հա խոտհարքների և 190 հա արոտների պարարտացման աշխատանքներ:Վարդաքար համայնքում իրականացվել է 2 հա անտառտնկման աշխատանքներ: Մարզպետարանի աջակցությամբ իրականացվել է 30 հա անտառպուրակի և 10 հա հանգստի գոտու ստեղծման համար նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես հողի բերրի շերտի ձեռք բերման և տեղափոխման աշխատանքներ:Նշված ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել և տարածքում տեղադրվել 98 աղբաման: Նշված ծրագրի ՇՄԱԳ / շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում/ նախագծերի քննարկումը գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել է Շիրակի մարզպետարանում և դրական եզրակացությամբ ներկայացվել լիազոր մարմնին:

«Հողերի էրոզիայի ինտեգրված վերահսկողություն հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի Սարալանջ, Փոքր Մանթաշ, Մեծ Մանթաշ, Նահապետավան և Հառիճ համայնքներում հիմնված 82.5 հա անտառների տարածքում Շիրակի մարզպետարանի նախաձեռնությամբ 2021թ. իրականացվել է վերատնկման, ցանկապատների և ոռոգման ցանցերի նորոգման աշխատանքներ:

2021 թվականին «10 մլն ծառ» նախաձեռնության շրջանակներում մարզում իրականացվել են լայնածավալ ծառատնկման և կանաչ տարածքների ընդլայնման աշխատանքներ: Գարնանային և աշնանային ծառատունկ իրականացնելու նպատակով Շիրակի մարզպետարանի կողմից ձեռք են բերվել 19000 ծառերի տնկիներ /փշատերև, մշտադալար, լայնասաղարթ/ և բաշխվել է մարզի բոլոր համայնքներին, որի արդյունքում մարզի կանաչ տարածքների մակերեսը ավելացել է շուրջ 20 հա-ով: Հաշվետու ժամանակահատվածում անտառատնկման աշխատանքներ են իրականացվել նաև «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գյումրու անտառտնտեսության կողմից Կապս բնակավայրում՝ 7 հա և Բասեն բնակավայրում՝ 3 հա: Կապսում անտառի հիմնման աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են մարզպետարանի կողմից մարզպետարանի աշխատակազմի և մարզային ենթակայության կազմակերպությունների համատեղ ուժերով, իսկ անտառների լրացման աշխատանքներ են իրականացվել 10 հա տարածքի վրա Կապսի և Լեռնագյուղի տեղամասերում:

2021թ. ընթացքում մարզպետարանի աջակցությամբ «ԷՅ-ԹԻ-ՓԻ» բարեգործական հիմնադրամի «Հայաստան ծառատունկ» ծրագրի շրջանակներում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել Շիրակի մարզի մի շարք համայնքներում: Նշված ծրագրի միջոցով մարզի Մարմաշեն, Վահրամաբերդ և Քեթի բնակավայրերում ընդհանուր առմամբ հիմնվել են թվով 44 փոքր տնկարաններ, իսկ Գյումրու «Սելեկցիոն» կայանում հիմնվել է 2000 մ^2 մակերեսով ջերմատուն տնկիներ արտադրելու համար, որոնք հետագա տարիների ընթացքում մարզը կապահովեն անհրաժշետ ծառերի տնկիներով: Մարզպետարանի նախաձեռնությամբ նշված ծրագրի շրջանակներում մարզի Մեծ Սարիար և Լեռնակերտ համայնքներում իրականացվելու է շուրջ 98 հա անտառաշերտի հիմնման աշխատանքներ: Լեռնակերտ համայնքում աշնանային ծառատունկի ընթացքում արդեն իսկ հիմնվել է 3 հա-ը, իսկ մնացած աշխատանքները կիրականացվեն հաջորդ տարվա ընթացքում: Նշված ծրագրերի ՇՄԱԳ նախագծերի համար գյուղանտեսության և բնապահպանության վարչության կողմից կազմակերպվել է քննարկում և դրական եզրակացությամբ ներկայացվել լիազոր մարմնին:

Շիրակի մարզպետարանի նախաձեռնությամբ նշված ծրագրի աջակցությամբ Գյումրու թիվ 8, թիվ 20 և թիվ 38 դպրոցների տարածքներում կիարականացվի կանաչապատման և մշտադալար տնկիների տնկման աշխատանքներ նորարական դիզայներական ոճով:

Գյումրի քաղաքում 2021թ. ընթացքում գարնանային և աշխանանային ծառատունկի ընթացքոմ իրականացվել է 2400 ծառերի տնկման աշխատանքներ, որից 1700 տնկիներ հատկացվել են Շիրակի մարզպետարանի կողմից;

«Հարմարեցման ազգային ծրագիր՝ Հայաստանում միջին և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորումը խթանելու համար» նախագծի շրջանակներում Գեոռիսկ գիտահետազոտական ընկերություն» ՓԲ ընկերության կողմից Շիրակի մարզում իրականացվում են կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության պլանների մշակման աշխատանքներ: Վարչության կողմից իրականացվել է տվյալների ձեռքբերման, ճշգրտման և դիտարկումներ իրականացնելու աշխատանքներ, ինչպես նաև կազմակերպվել են քննարկումներ մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների, համայնքների և գիտական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:Նշված աշխատանքներն ընթացքի մեջ են:

Վարչության կողմից հաշվետու ժամանակահատվածում մի շարք միջոցառումներ են իրականացվել կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների պահպանության և վնասազերծման ուղղությամբ, մասնավորապես, մարզի Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանների բնակավայրերում վայրի արջի ի հայտ գալու հանգամանքը առիթ հանդիսացավ կազմակերպելու մասնագետների այց նշված տարածաշրջաններ՝ արջի վարքագծի ուսումնասիրման և բնակիչներին ու նրանց տնտեսություններին սպառնացող վտանգը մեղմելու նպատակով: Այդ առիթով վարչության կողմից կազմակեպվել է նաև իրազեկում որսորդների շրջանում վայրի կենդանիների պահպանության ուղղությամբ:

Վարչության կողմից մարզպետարանում կազմակերպվել և անցկացվել են «Հայնախագիծ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված «Շիրակ-1», «Շիրակ-2», «Շիրակ-4», «Շիրակ-5», «Շիրակ-6», «Շիրակ-7» և «Աշոցք» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական

գնահատման հաշվետվությունների վերաբերյալ հանրային քննարկումներ, որոնց մասնակից են եղել համայնքների, գիտական, ուսումնական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Դրանց վերաբերյալ դիտողություններն ու առաջարկությունները ներակայցվել են նախագծող ընկերությանը, իսկ քննարկումների արդյունքների մասին տեղեկատվությունը համաձայն գործող կարգի ներկայացվել է լիազոր մարմնին:

Մարզում իրականացված թվով 20 ծրագրերի / հանքարդյունահանում, շինարարություն, ՓՀԿ-եր/ վերաբերյալ ստացված ՇՄԱԳ նախագծերի բնապահպանության վերաբերյալ բաժնի կողմից կազմակերպվել են քննարկումներ մարզպետարանի և համայանքապետարանների համապատասխան մասնագետների հետ: Քննարկման արդյունքների մասին ամփոփ տեղեկատվությունը ներկայացվել է լիազոր մարմնին:

ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի թիվ 1396-Ն որոշման հավելված 1-ի 18-րդ կետի պահանջների համաձայն մարզի համայնքներում /ըստ բնակավայրերի/ հողի բերրի շերտի պահպանման և օգտագործման վերաբերյալ տվյալները գրանցվել են տարեկան տվյալների հաշվառման մատյանում:

Շիրակի մարզի ջրային պաշարների ավելացման, առավել արդյունավետ օգտագործման նպատակով սույն թվականի մարտ ամսին վարչության կողմից հաշվարկվել և առաջարկություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն Արթիկի տարածաշրջանում 4 փոքր ջրամբարներ կառուցելու նպատակով, որոնց ընդհանուր հզորությունը կկազմի 2 մլն մ^3 ծավալ և ոռոգելի կդարձնի շուրջ 200-300 հա հողատարածք: Նշված ջրամբարները նախատեսված են գարնանային ձնհալքի և անձրևաջրերի կուտակման համար:

Կենսառեսուրսների պահպանության գործընթացի բարելավման նպատակով վարչության կողմից աշխատանքներ են տարվում նոր պահպանվող տարածքների ստեղծման, արգելավայրերի հիմնման, ինչպես նաև մարզի բնության հուշարձանների ցանկի համալրման ուղղությամբ, մասնավորապես կազմվել է բնապահապանական ծրագիր Մանթաշի ջրամբարին և հարակից տարածքներին բնության հատուկ պահպանվող ջրաբանական տարածքի կարգավիճակ շնորհելու նպատակով: Նմանատիպ ծրագիր է կազմվել նաև Ջաջուռի լեռնանցքին և հարակից տարածքներին պահպանվող տարածքի կարգավիճակ շնորհելու համար:

Բաժինը 2021թ. ընթացքում ակտիվ մասնակցություն է ցուցաբերել նաև բնապահապնության և ընդերքի տեսչության մարզային բաժնի հետ համատեղ ապօրինի ձկնորսության, ծառահատումների և շրջակա միջավայրի աղտոտման կանխմանը ուղղված միջոցառումներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Ռ. ՀԱՄԱՅԱԿՅԱՆ